

ԲԱՏԱՆՈՐՉ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Նշարտոյ համար
Տարեկան 10 Յր.
Վեցամսեայ 5 »
Մասնաւոր հաւար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ
—)(—
Գրութիւնք եւ չեմ տրուի
—)(—
Ծանուցան յոյր 20 սան-
րիւ կ. երեքին աւելի սն-
գաւեհոռու համար 20 ՕԼԾ
գեղջ կրչալ :

ՇՐՈՒՄ

ՄԱՍՆԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԵՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇՐՈՒՄ ՈՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՆԱՆՆԵՐԻ 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Կամակ եւ գրաւ գրիւն
Խմբագրութեան հասցի ին
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՁԵԿՈՅՑ

«Նարժում» սկսած էր հրատա-
րակուիլ Գամբր-Արչաւիքի եւ ճա-
ւարչի խմբագրութեամբ : Գա-
ւարչի հեռանալէն յետոյ կը կա-
սավորէր Գամբր-Արչաւիք : Իսկ
1898 զեկտ. 8էն սկսեալ, մաս-
նաւոր պայմանագրութեան հա-
մեմատ, փոխանցուեցաւ Վարդօփ
(Արվախի) որ այսուհետեւ թերթի
տէր եւ խմբագիրն է :

ՆՈՐ ԲԱՆ ԳԻՏԷՔ

—)(—

Մեր ազգային կեանքի վեր-
ջին ազգային դժբախտութիւն-
ները, հայրենիքի օրհնաստ փի-
ճակը, եւ յեղափոխական ձեռ-
նարկներու ցարդ անյաշողու-
թիւնները, գոնէ հետեւանքի
մասին, ան եզրակացութեան
հասուցին թէ, մենք աւելի ե-
րազողներ եղած էինք, քան իս-
կապէս ըմբռնողներ իրական կա-
ցութիւնը, եւ աւելի դրած ու խօ-
սած էինք, քան պատրաստուած
ու գործած :

Անցեալին աս արիւնստ ու
դառն փորձառութիւնը, գոնէ
հասկնողներուն, ահաւոր դասը
պիտի ըլլար ըմբռնելու հա-
մար, թէ ալ ժամանակ է որ
ինքնամփոփումով մը, աւելի
գիտակից եղանակով մը, լուրջ
գործունէութիւնով մը շարունա-
կէինք մեր ճանքան, մինչեւ որ
հասնինք մեր ազատագրութեան
փափաքելի վաճառին, եւ ըս-
ուեցաւ ալ թէ, շատ գրեթե ու
խօսելու ժամանակը չէ :

Հակառակը եղաւ սակայն :
գործեցինք, խօսեցանք ու զը-
լեցինք աւելի առատ, աւելի
բուռն ոչ թէ լեզուով, վերջաչի-
նելու եւ տեղի առաջ տանելու
համար սկսուած գործը, այլ
քանդելու, կործանելու եւ սեւ-
րելու համար ամէն յեղափոխա-
կան կազմակերպութիւնները :

Առտուն կանոխ ելլողը իր
թերթը հիմնեց, իր գրիչը շըս-
կեց, գիտէք, որ ուղիք, ուղ-
ղակի յեղափոխութեան : Մանուկ-

ներ, պատաններ իրաւ անցան,
եւ նոյն իսկ անոնց շարքերուն
մէջ սպրդեցան այնպիսիներ ալ
որոնք յեղափոխութեան մասնա-
կից էին, անոր աղուոր կամ գէշ
օրերուն, գործունէութիւնը ուղ-
ղած կամ որտապե՞զ, եւ ինչ որ
աւելի զարհուրելին է այս քան-
գոյ, միայն եյնող աղաղակներ
նոյնացան Սուլթաններու, Նուր-
եաններու, Բարդուղիմէոսներու եւ
Օրմանեաններու յայտարարու-
թիւններու հետ : Թէ հայը
հանգիստ էր, յեղափոխութիւնը
եղաւ պատճառ «որ աղբիւր վրայ
փութացուց աս ահարկու աղէտը»
թէ յեղափո ականները, բաղ-
գախնդիրներ էին եւն :

Պժգալի բան մըն էր աս, մա-
նաւոր անոր համար որ զըտ-
նուեցան ու կը գտնուին հաւա-
տացողներ անոնց անկեղծու-
թեանը :

«Անահիտ», գրական եւ գե-
ղարուեստական հանդէսը, իր
կարգին եւ չի մնար աս ընդհա-
նուր զարտուղութեանէն, ինք ալ
վարակուած նոյն հիւանդութե-
անէն, մասնակից կը ըլլայ քարկո-
ծումին, իր հայրենասիրական
կարծիքը մէջտեղ դնելով, զոր
այնքան վարպետ կերպով կը
գատարէ, կը շարքէ, կը ընդե-
լուզէ գոհար դարձուած քննող,
բառերու փաղկուն երանդներով
«զգային գործունէութիւնը վե-
րէն վար, սխալներու ամբողջ
շարք մը եղած է, զորս հատիկ
հատիկ կը թուէ Չօպանեան իր
«Պատասխանատուութիւնները»
յօդուածին մէջ :

Չօպանեան որ իր ազգային
գործունէութեան եղանակը ու
ըմբռնումը պարզած էր «միայն-
րենասիրութիւն» յօդուածովը,
եւ իր յեղափոխականի հասկնո-
ղութիւնը յայտնած է իր բարե-
կամներու շրջանակին մէջ, ըսե-
լով թէ «ոչ յեղափոխական եմ եւ
ոչ ալ կրնամ ըլլալ», պարզա-
պէս արգահատանքի արժանի
պիտի ըլլար : Եթէ երբէք իր
բաց յայտարարութիւններուն
հակառակ, ուղղակի ներշնչուած
չըլլար կողմնակի նկատուածներէ,
եւ առաջնորդուած չըլլար բարե-

կամական զգացումներէ եւ հին
հաշիւներ մաքրելու տենդէ :

Չօպանեան կը ըսէ, երբ ժա-
մանակին ինքնուրուի սրահնե-
րը կը թնդացունէր «Հնչեալը,
ա՛խ Հնչեալը», բացազան-
չութիւնով եւ իր մանկունակ ու
միամիտ հայրենասիրութեան ու-
գեւորած թալիքը կը պարպէր
իր բոլորտիքը, ինքզինքը ամէն
մասնակցութեան, ամէն վերա-
ցումէ ու յափշտակութեան հեռու
նկատելով, սառն ու անփրփով
վերլուծում մը ընել կը յայտնէ,
իր ան երկար խաղական ուսում-
նասիրութեան մէջ, ուր ամէն
բան սե կը նկարագրուի :

«Պատասխանատուութիւնները»
որոնք իրենց ամբողջութեանը
մէջ կրկնութիւն եղած են, ու-
րիչներու, ուրիչ ատեն գրածնե-
րուն. Չօպանեան ի մի հաւաքելով
իրարու կապկպած է, այսինչը
ըսաւ չըսաներով, որոնք պահ
մը քննարկութեանէ աւելի
զուեշտագրի մը գիմացը կը հա-
նեն մեզ :

Իր պատմական ակնարկութիւն-
ները ուր ներսէս, Օտեան, Սէր-
վիչէն կը ստուերտան, որ պաշ-
տելի Բաֆֆին երկուստարգու-
թեան վնասող տարր մը կը նը-
կատուի, յայտնապէս կը ցուցնեն
թէ ժամանակակից մէկէ մը
փոխ առնուած կարծիքներն են
եւ ի շնորհս անոր գրուած, եւ ու-
րոնք վրձնելի են միշտ եւ պատ-
մական անշահախնդիր եւ ան-
կողմնակալ ուսումնասիրութեան եւ
քննադատութեան կարօտ :

Իսկ գալով յեղափոխա-
նէ գործունէութեան մասին ըսուած-
ներուն, մեր դէմը ունինք մէ-
կը որ բոլորովին խակ է, եւ իր
բոլոր տեղեկութեանց պաշարը
պատահական խօսակցութիւննե-
րէ քաղած է, եւ թերեւս Պոլսի-
ցի մը սրտին ցան է որ կը
պայթի հոն, իր անդորութեան
մէջ վրդովուած զատուացիներ
ու հարցին առթիւ :

Յեղափոխութիւնը քննադա-
տութիւն չը սիրեր եղեր, ինք
որ կենդանի քննադատութիւն
մըն է թուրք կառավարութեան
բարբարոս «բէժիմ»ին դէմ :

Բայց ո՞վ ըսաւ թէ քննադա-
տութիւն կը ընենք, երբ ամէն բան
կը բարդենք նաղարբէկի մը
վրայ. ո՞վ հասցուց աս մարդը
աս գիրքին, ինչո՞ւ մինակ ձգ-
ուեցաւ :

Քննադատութիւնն է, երբ ա-
ռանց գործունէութեան մը ներ-
քին մանրամասնութիւններն ի-
մանալու, յայտարարենք թէ
«Իրօշակոսանիները անտարբեր եւ
ձեռնպահ մնացին Ձէյթունի դիւ-
ցազնութեանց առջեւ, եւ կամ իր
հերոսները օր մը պարզապէս
«Հնչեալ»-ան դափնիներէն նեղ-
ուած եւ նախանձէ մրկած կազ-
մակերպած են Պանքալի ցոյցը :

Ասոնք պարզապէս հայհոյու-
թիւններ են, եւ սրբապղծութիւն
յիշատակին անոնց որ քաջաբար
ինկան աղատութեան ճամբուն
վրայ :

Եթէ մարմնի մը ու է գոր-
ծունէութեան յաջողութեամբ չի
պսակուիլ յանցանք է, բայց
ան ժամանակ միայն կրնանք ն-
րեսին պոռալ, երբ ալ բոլորն-
վին ձեռնթափ կը մնայ, եւ իր
վերջին խօսքը կըսէ : Բայց
գիտենք որ մեր յեղափոխա-
կանները աւելի քան երբէք լուրջ
կերպով իրենց գործը կը շա-
րունակեն :

Չօպանեան ալ կը սկսի ծիծա-
ղելի դառնալ երբ առանց կար-
մրելու կը խեղաթիւրէ «կըսուեք
մը, «թէ ազգ մը առանց արիւ-
նի չէ կարող փրկուիլ» : Բայց
ինչպէ՞ս չը հասկնար աս նշոնա-
բանին պարզ իմաստը, թէ արիւն
պէտք է, բայց զէնքը ձեռքը
թշնամիին գէժ պատերազմող
յեղափոխականի արիւն, եւ ոչ թէ
վայրենի, բարբարոս կառավարու-
թեան մը զոհող անմեղ ժողո-
վրդի մը արիւնը :

Եթէ Չօպանեան անկեղծ ըլլար
իր համալուծմին մէջ, առափ
ծուռ ուղղութիւնով մը չի պիտի
յարձակէր յեղափոխութեան վը-
րայ, գոնէ իր դէմը քանի մը
դէմքեր, քանի մը գործեր պի-
տի տեսնէր, եւ տարտամ ու անո-
րոջ վեր աբանով մը ազգը չը
պիտի հրաւիրէր ընդհանուր ան-
գործութեան մը :

Մեր ազատագրութեան գործը անչափ լայն ու բարձր է ու, ամէն հայ պարտաւոր է իր գերը ճանչնալ անոր մէջ : Չօպանեան որ այնքան եռանդով կը խօսի օտարներուն առջեւ մեր վրայ և հայ ազգը ու գրականութիւնը կը ճանչցունէ անոնց, օգտակար ու գնահատելի պարտականութիւններ կը կատարէ : Սակայն մեզի դարձած ատեն թող քիթն ու բերանը չի ծռմուկէ, թող քննադատէ ուղածին չափ, թող կտրէ նետէ, բայց փափարելի է որ միշտ ըսել չի աայ մեզի, «նոր բան մը գիտէ՞ք» :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՆՈՒՊԱՐ ՓԱՅՍ ՆՈՒՊԱՐԵԱՆ

Հայութիւնը՝ Նուպար փաշայի մեծնելովը, կը կորսնցունէ իր քաղաքագիտական կարողութեան փայլուն ներկայացուցիչներէն մէկը, որ թէ և օտար երկրի մը ծառայութեանը նուիրուած, զիսցած էր սակայն միշտ տաք սիրտ մը պահել զէպի իր ազգը, որուն պատուաբեր և օգտակար եղաւ իր տաղանդովը, անուշովը և զբամովը :

Հիւքստներու երկիրը, Եգիպտոս, անոր նորագոյն Փարաւոն խառնուրդը, ու մանաւանդ ընկի ժողովուրդը, մէլաները, շատ բան կը պարտին անոր, և մեզի հետ մէկտեղ շատ մեծ կորուստ մը կուենան մարելովը առ կեանքին, որը ամբողջովին նուիրուած էր իրենց վերանորոգութեանը ու բարօրութեանը :

Աս ակնաւոր հայ քաղաքագետը, Եգիպտոսի նախկին վարչապետը ծնած էր Իզմիր, և կը սերէր Նուպարեան ընտանիքէն : Կանուխէն շրջուեցաւ Եւրոպա, և Պրանսական-Չառիքիական միջնակարգ վարժարանի մը ընթացքը աւարտեց, նշանակուեցաւ Կոնստանտնուպոլիսի Ֆրանսերէն լիզուի դպրութեան և ընդհ. մատենագրութեան մէջ :

Իր սովոր թէ 16 տարեկան հասակին մէջ իր վարժարանէն զետեւ ելաւ Երբ փափագ ունեցաւ Ալճէրի երթալու, և Օտար Լէզնոնին մէջ ծառայելով, Ֆրանսական վարչութեան մէջ զարգանալու : Բայց իր ստպատանեկան փափագը չի կրցաւ իրագործել, Ֆրանսական պատերազմական պաշտօնարանէն զփուարութեանց հանդիպելով : Իր հօրեղբայրը, Պոլոս պէյ, Մէլանի Ալի փաշայի անձնուէր պաշտօնեան, կանչեց զինքը Եգիպտոս, Նուպար քնաց հոն և մըտաւ արտաքին գործոց պաշտօնատան թարգմանիչներու գրասենեակը :

Նուպար օժտուած ընտիր կազմուածքով, սուր իմացականութիւնով, արագ ու վառ յիշողութիւնով և մանաւանդ պարկեշտ աշխատասիրութիւնովը շուտով գնահատուեցաւ իր պաշտօնին մէջը : Եգիպտոսի մեղկ կլիման ու միջավայրը ոչինչ ազդեցութիւն չըրին Նուպարի ժուժկայ, պարկեշտ ու զգաստ կեանքին վրայ, որ իր 25 տարեկան հասակին մէջ ամուսնացաւ Օր. Երամեանի հետ, զուտար Քարաֆէհայ Գէորգ պէյի եւ թոյր Աբրահամ փաշայի :

Նուպար փաշա ամուսնական ընտուութեան մէջ չի սխալեցաւ : Տիկին ուպար փաշա, խնամաւոր դաստիարակութեամբ զարգացած, լուրջ և

զուարթ մարմով, մինչև վերջը ընկերը, սրտապնդողը և միթարիչն եղաւ իր ամուսնոյն : Վարչական բոլոր տաղտուկներուն և զօժուարութիւններուն մէջը :

Այր ու կին այնքան իրարու կպած էին որ, երբեք իրարմէ հեռու երջանկութիւն և կամ հաճոյք չի փնտնեցին, և Նուպար փաշայի սուներ իր մաքրութիւնովը : Կարկեշտութիւնովը օրինակելի եղած է Լիզիպտոսի մէջ : և օտարէն իսկ նկատուած ու գովուած :

1748ին Նուպար փաշա Փարիզ գնաց իրրեւ քարտուղար Մէլանի-Ալի փաշայի որդեկոյն և յաջորդին Իպրահիմ փաշայի : Ասոր օրով էր որ Վահագիեաններն ապստամբեցան ու զսպուեցան, և Նուպար փաշա, որ արդէն բուսականին համբաւ և համակրանք կը վայելէր իտալական պալատին մէջը, իր խելքովը և ազդեցութիւնովը բուսական չափաւրեց Իպրահիմ փաշայի ծայրայեղ խստութիւնները, Նոյն պաշտօնը շարունակեց նաեւ Իպրահիմ փաշայի յաջորդին Ապպաս փաշայի օրը : Նուպար փաշա 30 տարեկան էր երբ Ապպաս յաջորդը Սախա փաշա, զինքը պահ մը անձնական քարտուղար պահելէն ետքը՝ Եգիպտոսի երկաթուղեաց ընդհ. տնօրէն կարգեց : 1856ին երկաթուղիի արկած մը պատահեցաւ որուն զոհ գնաց նաեւ իտալիկ անդրանիկ որդին քիչ մնաց Նուպարին : Նորհազրիութեանը պատճառը լլար :

1862ին Նուպար փաշա Եւրոպա զրկուեցաւ, Եգիպտական առաջին փոխտոթութիւնը կնքելու, և ընդունեց Պրանսական առաջարկը :

Բայց Սուէզի ջրանցքի խնդրին մէջը աւելի Անգլիոյ կողմը բռնեց, և հակառակեցաւ Պ. Ֆէրախանա տը Լէսէքսի գաղափարին : անկարելի նկատելով ջրանցքին բացումը, ինչ որ ան ատենի մեծ ճարտարագէտներուն ալ համոզումն էր : Պրանսական լրագրիչները զինքը ամբաստանեցին թէ, իր կարծիքին մէջ անկեղծ չէր և շահուած էր Անգլիացիներուն կողմէ :

Խախտ Սամայի փաշայի օրով Նուպար փաշա վէզիրութեան բարձրացաւ, և արտաքին գործոց նախարար, յետոյ նախարարապետ եղաւ :

Ասկէ կը սկսին Նուպար փաշայի գլխաւոր գործունէութիւնները, իր երկրին հիմնական բարեկարգութեանը համար : Մինչև ևս ժամանակ Եգիպտոսի մէջ ոչ կանոնաւոր օրէնք կար, և ոչ ալ օրինաւոր դատաւոր : Ֆէլլահ ժողովուրդը շատ կը նեղուէր դատարաններու քմահաճ գործերէն : Եւրոպացիները, որոնք հեռզնեղ կը շատնային երկրին մէջ, իրենց հիւպատոսարաններովը պատանուած, շատ անգամ օրինաւոր դատարաններու բացակայութենէն զերծ կը մնային : և ևս պատասխանատուութենէ, և օտար չարագործներ արձակ համարձակ կը պատէին հոն :

Անհրաժեշտ պէտքը զգալի էր դատարանական վերակազմութեան մը : Նուպար փաշա 1867էն սկսելով սու գործին ձեռք զարկաւ, շատ ու շատ զիմու մեղք բրաւ, և վերջապէս 1875ին յաջողեցաւ ձեռք բերել օտար սերութեանց հաւանութիւնը, Երկրին դատական գործերը ամուր հիմն վրայ խարսխեց, հաստատելով իրենց դատարանները, և խմբագրել սուաւ Քաղաքային, Առեւտրական և Պատժային օրէնքները :

Ստանդմէ զատ մասնաւոր հոգ տարաւ Ֆէլլահ ժողովուրդին բարօրու-

թեանը : Աս խեղճերը, ամէն երայխաւորութենէ զուրկ, քմահաճ դրութեան մը ներքեւ, անարտունջ կը կրէին խարաղանի պատիժը և տարապարճակ աշխատութիւնը : Ասոնց համար ալ մասնաւոր դատարաններ հիւնեց և որոնց համար Եւրոպայէն զատաւորներ բերել սուաւ :

«Ասանց արդարութեան կտաւաւորութիւն չըլլար» : անա Նուպար փաշայի բնարանը, և որուն համեմատ չարժեքաւ իր պաշտօնավարութեան մինչև վերջը : Քանիցս զըժտուեցաւ Իսմայիլ փաշայի հետ, անոր բռնաբարոյ և կողոպտող շրտութեան զէմ ըողքեղով, և վերջապէս բաժնուեցաւ անկէց և ատեն մը Եւրոպա պտտեցաւ :

Իսմայիլ փաշայի հրաժարելէն և Թէվֆիկի յաջորդելովը Նուպար փաշա նորէն Եգիպտոսի վարչութեան գլուխը անցաւ :

Արապի փաշայի ապստամբութիւնովը, երբ Եգիպտոս վերջնականապէս ինկաւ Անգլիական գերիշխանութեան տակ, երկրին համար բարենորոգութեան աւելի նոր չըջան մը բացուեցաւ, և Նուպար փաշա իր անգլիական հակամեծութիւնը, բուսական զիւրացուց անոնց դործը, և Ֆրանսական ազդեցութիւնը շնչեց Եգիպտոսէն : Մինչև վերջը իր պաշտօնավարութեան միշտ աչքի առնուեցաւ Եգիպտոսի ապագան, և երբ իր ծերութեանը պատճառով թողուց վերջնականապէս իր քաղաքական ասպարէզը, զոհ սրտով մեկնեցաւ Եգիպտոսէն : զոր սպասած էր իշխող խոժոյժ կառավարութիւններու քմահաճութիւն և բուսականութիւններէն :

Նուպար փաշա, իր բարձր պաշտօնին, իր երկարատեւ ծառայութեան շրջանին մէջ, իր գրամական գիրքը չինեց, ոչ թէ արեւելեան վեհապետի մը կամ փաշայի մը պէս հպատակները կողոպտելով ու կեղեքելով, այլ պարզապէս հեռատես և գործօն արեստագէտի մը պէս : Գլխաւոր բաժնետերէն մէկն եղաւ, Եգիպտոսի ջուրի և երկաթուղեաց ընկերութեան, հաւաք ունենալով Եգիպտոսի ապագային վրայ, նուէր առաւ և կամ գնեց աման հողեր, ջրանցքներ բացաւ, մշակել սուաւ, և ասով թէ ինք շահեցաւ և թէ երկրին և Ֆէլլահին շահեցուց : Աս ուղիղ և օգտակար գործունէութեանը համար էր որ իր պետերէն և ոչ մէկը փորձեց, անուանարկել զանի և ունեցածը գրուել, սովորական բան մը Եգիպտոսի մէջ :

Ազգ. կեդրոններէ հեռու և իր բարձր պաշտօնին հողերովը բեռնաւորուած, շատ մեծ գործօն զեր մը չի կրցաւ կատարել ազգային խնդիրներու մէջ : Մեր ան մեծ անձնաւորութիւնները, որոնք կը պաշտօնավարեն մեր վրայ իշխող պետութիւններու մէջ, չեն կրնար օտանց իրենց գիրքը խախտելու, կամ իրենց անձը վտանգելու, ազգային ձգտումները զեկավարել և կամ ուղղել : Հերիք է որ ասոնք չարը չի գործածեն իրենց ունեցած զիւրութիւնները, ի վաս ազգին, և կը բաւականանան բեր ձեռքի տակէ և կամ լուխեայն իրենց կարծիքը յայտնեն :

Նուպար փաշա մինչև վերջը կըրցաւ ազգասիրի համբուին մէջը մնալ : Իր խորհուրդը, իր գրամ սուաւ երբ իրենց զիմուեցաւ, և կամ երբ ինք հարկ տեսաւ :

Իր գործերէն յիշեց մէկ քանին, Նուպար փաշան իր առատ նուէրովը լիցուց Շահնազարեան կարապետ վարդապետի կտակին գումարը, և

որով 1866ին Պոլիս իսպաղիզի մէջ Առաքել-Նուպար-Շահնազարեան վարժարանը բացուեցաւ :

Մեկնեան եղաւ նաեւ Վիկտոր-Լախլուս հայագէտ Ֆրանսագիրին, և որ անոր ծախքովը հրատարակեց երկու սուտար հատորներ, Հայոց չորրորդ և հինգերորդ դարերու պատմական երկաւորութեանց Ֆրանսերէն թարգմանութիւնը : հմուտ անօթութիւններով, և կենսագրական տեղեկութիւններով :

Վերջին տարիներս մանաւանդ երբ Փարիզ քաղաքում կապրէր, նախախնամութեան պէս բան մը եղաւ, բոլոր ան հայերուն, որոնք իրր սուցիչ, գրագէտ, ուսանող, արկածեալ, վերջին զօրախառնութիւններէն ազրիւտ ամէն միջոցէ զրկուած էին :

Նուպար փաշա իր վերջին օրերուն մէջ, ընտանիքի մը նահապետին պէս սիրով կրողուէր իրեն զիմուները և ամէնուն ալ կուտար իր գրամէն, և այդ վերջին օրերու ընդհանուրին համակրութեանը և օրհնութիւններուն մէջն է որ կնքեց իր երկար ու օգտակար կեանքը :

Նուպար փաշա մեր պատմութեան մէջ կը մայ իր սիրտը մը սաղանդաւոր և մաքուր քաղաքագետի և ազգասիր անձնաւորութեան, ուրկէ կրնան օրինակ տանել բոլոր անոնք որ օտար վարչութեանց մէջ կը ծառայեն :

ՊՐԻՏ

ԹԵՂԵԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՐ ԹԵՂԵԱԿՑՆԵՐ

Գահիրէ, 1 Յունիս

Ինչորովին անհիմն է տեղույս Առաջնորդական տեղապահի, Աշտու եպիսկոպոսի զէմ զժգոհութեան հանրապրի մը լուրը : Իսկապէս այդ տեսակ շարժման մը սկզբնաւորութիւնը եղած է, բայց բոլորովին նկարագրէ զուրկ և անզոյն անձերու ձեռքով : Աստոնց պարագլուխն է Փահիրէի եկեղեցիին լուսարարը, երես առած, ախտավարակ հին պաշտօնեայ մը, որ չի կրնալով մարսել Տեղապահէն ընդունած արդարացի կշտամբանքները, անոր բացակայութենէն օգտաբաղելով, իրեն պէս խելացիներ գլուխը ժողոված և Պատրիարքարան ուղղելի հանրագիր մը ստորագրել սուած է : Պատրիարքարանը երբեք նկատողութեան չառաւ, և չըզբաղեցաւ անով, ստորագրողներուն մէջ կշիռ ունեցող անուն մը չը գտնուելուն համար : Եգիպտական հայերը զժգոհութեան լուրջ պատճառ մը չունին իրենց Տեղապահէն, ընդհակառակը, Ազգ. քանդակարի թաղ. խորհուրդը Տեղապահին լիմիտեմէն վերադարձէն ի վեր կը ճանչէ անոր իրաւասութիւնը :

Եթէ զժգոհութեան անվերջ շշուկներ կան, ան ալ Պոլսի պատրիարքարանի զէմ է, տեղույս Առաջն. խնդրոյն նկատմամբ հետեւած հակասահմանադրական և անօրինակ ընթացքին համար : Դժբախտութիւնը ունեցանք

կառավարութիւնը մտադրութիւն ունի գաղթականները բռնի ետ ուղարկել, նոյն իսկ անոնք որ 15-18 տարիներէ ի վեր հոն հաստատուած են :

—Թուրքիա լրջօրէն կը շարունակէ երկիրը բարեկարգել, գոնէ Իրաքէնեքով :

Կայս. Պալատին Ա. Քարտուզաբը Կայս. նոր Իրաքէ մը կը հազորդէ նահանգաց կուսակալներուն «հրամայող որ իրենց իրաւասութեան շրջանակին մէջ աշակերտը հակողութիւն ի գործ դրեն են խաղաղութիւնը, անգործութիւն և ապահովութիւնը անվերջ պահելու համար, և ստոնց համար կոչում կը ըլլի բոլոր պաշտօնէից պարս. անաչութեան : Այս հրամաններուն չանսացող պաշտօնեաները պիտի պատժուին խստութեամբ » :

—Տիգրիս թերթը հրատարակուած մասնակցի իր կազմակերպած ժողովրդական քուէարկութեան, ստուգելու համար թէ Ամերիկայի հայ գաղթականութիւնը կուզէ՞ Սարաճեան Սրբազանը իբր ընդհանուր առաջնորդ կամ ոչ : Յանձնարումը մը կազմած է որ պիտի հսկէ քուէրկութեան վրայ : Եթէ արդիւնքը ժխտական ըլլայ, պիտի ներկայացուի Վեհ. Կաթողիկոսին քուէներուն հետ, պէտք եղածը տնօրինելու համար : Կը փափուքինք զիտնալ թէ ի՞նչ կը խորհին ընել Ամերիկացի Հայերը, եթէ Կաթողիկոսը չուզէ նոր հովիւ մը զրկել :

—15 օրուան մէջ 50 հայ գաղթականներ Նիւ-Եօքս հասած են :

—Նիւ Հէյլընի Իրազարտնի ընկերութիւնը հրապարակային ժողով մը ունեցեր է, ուր բազմաթիւ ատենաբաններ խօսած են Հայ ազգին ու Հայ լեզուին ծագման ու կարեւորութեան և գրականութեան օգուտներուն վրայ : Պուկարիոյ Հայ գրադարանի ընկերութիւնները ի՞նչ կընեն, ի՞նչ կերպով կաշխատին օգտակար ըլլալ իրենց միջավայրին :

ՍԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

«Շարժում»ի երկրորդ տարեշրջանը կը սկսի Փետր. 1ին :

Որովհետեւ մեր բաժանորդներուն մեծագոյն մասին պայմանաժամը կը լրանայ այդ միջոցին, կը խնդրենք որ յառաջիկայ շրջանին կանոնադրապէս թերթ ստանալ փափաքողները բարեհաճին շուտով նորոգել իրենց բաժանորդագրութիւնը :

Նաև կը խնդրենք մեր գործակալներէն որ բարեհաճին անյապաղ զրկել մեզ անցեալ շրջանի մանրամասն հաշիւները և մնացորդ պահանջները :

—). (—)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ն

Թուրք կառավարութիւնը նրկառի առնելով որ Հայ հրոսակային խմբեր շարունակ Պարսկական սահմանագլուխէն Օսմանեան հողերը կարշաւեն, սկսած է բազմաթիւ պատնէշներ կառուցանել Պարսկա-Թուրք սահմանագլխի վրայ :

—Պոլսոյ զեռպանները Սօֆիայի Մակեթոնական կոմիտէէն գրութիւններ ստացած են որոնցմով կը պահանջեն միջամտել Մակեթոնիոյ և Էտրիքէի մէջ մայրուիք բարենորոգմանց գործադրութեան համար. հակառակ պարագային խռովութիւնները անխուստօվելի են :

—Ամսոյ մէկէն ի վեր Էտրիքէի զօրաբանակին համար զրկուած են 47 վախօն Մուսլէրեան հրացան և ռազմավթերք :

Ս Պ Ա Ն Ի Ն

Սպանոյ նախարարացեալ, Սակաթա, առաջարկութիւն մը ստացած է Ֆիլիպինոս կղզիներու ապստամբութեան պարպալու Սկիւնալտօէն, որով զերիներու ազատման իբր պայման կառաջարկէ որ Սպանիա ճանչնայ Ֆիլիպիններու անկախ հանրապետութիւնը և միանայ վերջինին հետ Միացեալ-Վանդաց թոյլ չի տալու համար զայն իրեն կըցել, ինչպէս որ դիմում մը կը ղաժ է նաև Հոնոլուի Պապին մօտ ներկայացուցչի մը առաքման մասին, խորհրդակցելու համար կրօնական խնդրին առթիւ :

—Սպանիական կառավարութիւնը կորսնցուցած ըլլալով դրեթէ իր բոլոր գաղթականութիւնները, վճուեց Գաղթային նախարարութեան պաշտօնը բուրովին ջնջել : Այս նախարարութեան հաշիւները քննելու համար մասնախումբ մը պիտի նշանակուի :

Խ Ա Ո Ն Լ Ո Ւ Ր Ն Ե Ր

Արտաքին գործոց նախարարութեան ելեւմտացոյցին վիճաբանութեան միջոցին ընկերվարական երեսփոխան մը առաջարկեց ջնջել արեւելքի ֆրանսական կրթական հաստատութեանց յատկացուած վարկերն, որոնցմէ քարոզիչները միայն կօգտուին, ըստ : Տեքլատէ, արտաքին գործոց նախարարը, պատասխանեց թէ իրերու ներկայ գրութեան մէջ ֆրանսական շահերը կը պահանջեն որ վարկերը քանցան քան թէ պակսին :

—Տեքլատէի արտասանած ճառին մէջ, ահոյին ուշադրութիւն գրաւեցին հետեւեալ խօսքերը. «Մեծ փոփոխութիւններ կը պատրաստուին, և հետեւաբար խոհեմ ու լաւ կը շուրջապահանութեան մը պէտք ունինք » :

—Կ. Պոլսոյ Ֆրանսական նոր զեռպան Պ. Քոնսթան իր պաշտօնաւեցիլին ժամանեց :

—«Մալիւմաթ» և «Սէրվեթ» պաշտօնական թերթերու խմբագիր-անօրէնը արտօնութիւն ստացաւ «Նովինի» պուլկարերէն թերթ մը հրատարակելու :

Անշուշտ այդ թերթը պիտի աշխատի Մակեթոնիոյ գէմ գրելու և անոր մասին սուտ պատմութիւններ յերկրի վրայ :

—Եգիպտոսէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ եգիպտական կառավարութիւնը որոշեր է Սուտանի Բորսոֆան և Տարբուր քաղաքներն ալ զրաւել : Այս մտքը պատրաստութիւններ սկսած է տեսնել : Վերին Նեղոսին թնդունօթածիգ զօրաց թիւն աւելցած է :

—Կը հաստատեն թէ Իտալական կառավարութիւնը ի մօտոյ նաւահանգիստ մը ձեռք պիտի անցընէ շինական հողին վրայ :

—Ֆիլիպինոս Բարիլեան թերթը հրատարակած է բազմաթիւ նշանաւոր անձերէ ստորագրուած յուրանք մը որ յորդոր կը կարգաւ վերջ տայ Տրէյֆլուսեան յուրան և համակերպիլ Վերաքննիչ Ատենին արձակելիք վճովին :

—Յառաջիկայ գարնան երբօքը ներէ, ծովային զանազան շարժումներ և ռազմավորձեր պիտի ըլլան Առասական Չինաստանի ծովերուն վրայ : Մայրաքոյն Արեւելքի օտար մարտանաւերը անշուշտ մեծ հետաքրքրութեամբ պիտի դիտեն այս ռազմավորձերը :

—Ռուսիոյ յառաջիկայ տարուան պատերազմական ծախքերուն վրայ պիտի աւելնայ 35 միլիոն ռուպլի : Վիէնական թերթ մը այս անգիկութիւնները տալով կը հարցնէ թէ ծաղրելի չէ՞ այսքան ահագին պատերազմական ծախքեր որոշել և միևնոյն ատեն զենքեկեցութեան զեռպանախորհուրդի հրատարակարգալ :

Կ Ո Ր Ս Ո Ւ Ն Ծ

Սերաստիոյ Գառլալ զիւղի մարութիւն Չաքէեան երիտասարդը, որ երբևէ տարի առաջ Վառնաի քարափը կաշխատէր, անյայտ եղած է : Կը խնդրուի որ ողջ ձնձի մասին տեղեկութիւն ղենցողները հաճին դրել խմբագրութեանս :

Բ Ա Ր Ո Յ Ա Վ Ա Ն

Փ Ի Լ Ի Ս Ո Փ Ա Յ Ո Ւ Ի Ի Ն

Այս դասախօսութիւն պիտի վերսկսի յառաջիկայ երկուշաբթի երեկոյան ժամը եօթնուկէսին. ունկընդիրք ամենայն սիրով կը հրաւիրուին ներայ գտնուիլ ճիշդ ժամանակին :

Պատ. Հայկ Եարարման պիտի քարոզէ վաղը ժամը երեքին տաճկերէն լեզուաւ եւ Պատ. Տիգրան Շահվէլեան ստաւօտուն ժամը իննին հայերէն լեզուաւ :

—). (—)

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 16 Յունուար

ՊՈՒՂՏԱՅ
Վախօն, լիպրա 55—58, հէքթօր. 9.40—10.60 ֆրանք
Արապա, լիպրա 55—60 հէքթօր. 9—12 ֆրանք

ԱՐՔԱ
Վախօն 42—50 հէքթօր. 6.40—6.80 ֆրանք

ՄԻՍԻՐ
Վախօն, 55—57 լիպրա, 6.10—6.20
Արապա, 55—60 լիպրա, 6.40—6.80
Կիւնկէ 15—20 վախօն, 25—30 արապա
Կէլմէքսէ տիր :

ՏԱՐԸ
Կիւնկէ 1/2 արապա կէլմէքսէ տիր. 58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք
Արապա մուսուլմէքսէ Կարօլուն 21 ֆրանք հիւսպը իլ տիր :

ԲԱԶՄԱՎԷՊ
Ա Մ Ս Ա թ Ի Ր թ
57րդ Տարի
Տարեկան գին 10 ֆր. — 4 ռուպլի. — 2 Տարի :
Հասցէ Բէլաքսիոն տր լա որվիւ
Բազմավեպ. Ս. Լազար :
Վրնից (Իթալի)

Լ Ո Ս ՏԵՍՍԻ
—
Տէր Ղեւոնդ Ք. Փափազեանի հայերէն—սուրբերէն տարեցոյցը, պատկերազարդ և ճոխ պարունակութեամբ, Գինն է թղթակաղմին 1 ֆր. լաթակաղմին 1.50 և փառակաղմին 2 ֆր. :
Գիւմի հեղինակին, Կալաց :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնել կոշիկներ որոնք իրենց վրայ միացուեն ձեր եւ զիմաց կուսութեան կատարելութիւն և մանաւանդ զինի չափաւորութիւն, առանց վարանելու զիմեցեք Ստեփան Սորասանձեանի, Մուսալա, բաղնիք փողոց, հաճի Հասան էֆէնտի օթէլին տակ. հաւատարմէք թէ անթիւն պիտի օգտուիք :



Տ Պ Ա Ր Ա Ն
Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն
Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ
Վ. Ա. ՈՆՍ.
Երկրորդ բաղ, Երթէճախ փողոց.
Սագալը Զեռէի կից.
Կը տպագրուին հայերէն, պուլկարերէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն, և այլ լեզուներով այցեատման, հասցեատման. հարսանկան հրաւիրագիր, ազգաբարութիւն, նամակազուխ, պահարան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք, լրագիր, և այլն :
Գուճառը եւ ոսկեգոծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ տներ եւ մասնաւոր գործիքներ կը գտնուին :
ՄԵՍ ԽԱՍԱՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ
ԳԻՆԵՐԸ ՅՈՑԹ ԳԻՆԵՐԱՍՏՅԵԼԻ
ՈՐԵՆ ԿԱՐԵՆԵՐԸ ԵՒ ԿԱՐԵՆԵՐԸ ԵՒ ԿԱՐԵՆԵՐԸ
— Ե. Ե. Ե. —

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.
Печантца „Взаимность“. Варна